ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ

08.05.2018թ.

ժամը 11 ^{00} -ին

Բացողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ֆինանսական վարչության ֆինանսական հոսքերի բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Սալայան,

ՀՀ ԶՈՒ ՍՎ օպերատիվ բաժնի ավագ սպա, կապիտան Ա. Աբրահամյան:

Օրակարգը՝

1. **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3»** ծածկագրով ԲՄ ընթացակարգին **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում ներկայացված հայտերը:

Սահմանված ժամկետում **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքում բեռնվել են ներքոհիշյալ մասնակիցների հայտերը, որոնք սահմանված կարգով հաստատվել և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ.

- Սահմանված կարգով ներկայացված մասնկիցների հայտեր, որոնք ընդունվել են **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի .

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ

Բացող Ս. Սալայան

Բացող, Ա. Աբրահամյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 08.05.2018թ.

ժամը 11 ^{00} -ին

Մասնակիցներում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան.

գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության շահագործման և պլանավորման բաժնի սպա, մայոր Ս. Ստեփանյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,

ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնիՊ պետի տեղակալ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3» ***ծածկագրով*** **բաց մրցույթ** ***ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ա.Բաղրամյան)

1. Տեղեկություններ հայտ/գնային առաջարկ/ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների մասին.

2 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3»** ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

4 Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3»** ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա.Բաղրամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3»** ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Կարկումավտո սերվիս» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

14.05.2018թ-ին հանձնաժողովը շարունակեց աշխատանքները

2 . "ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա.Բաղրամյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի,

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտերում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են,

2.3 Մասնակցի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա.Բաղրամյան)

3.1 Գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

ՀՀ	Ծառայության անվանումը	Նախահաշվային		Հաղթող կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների		
		Առավելագույն գումարը	Միավորի գների հանրագումարը	անվանումը	Գինը Միավորի գների հանրագումարը		անվանումները	Գինը Միավորի գների հանրագումարը	
					առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	ՈՒԱԶ ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) վերանորոգման ծառայություն	30000000	82138658	«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ	58658500	70390200			

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, տույն ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը և քանի որ **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԲՄԾՁԲ-4/3»** ծածկագրով ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, գնահատող հանձնաժողովը որոշեց, գների նվազեցման նպատակով **17.05.2018թ. ժամը 12:30-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

17.05.2018թ-ին հրավիրված բանակցության արդյունքում «Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն չներկայացավ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա "ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա.Բաղրամյան)

4.1 **18.05.2018թ-ն գնահատման նիստի ավատի օրը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3»** ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց **1-ին** չափաբաժնում **«Կարկոմավտո սերվիս» ՍՊԸ-ն:**

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա.Բաղրամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Բաղրամյան)

6.1 **"ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-4/3»** ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

18.05.2018թ.

Գնահատող, (ԳԱՊ) Տ. Մաթևոսյան

Գնահատող, Ս. Ստեփանյան

Գնահատող Ա. Սիմոնյան

Գնահատող Հ. Բարսեղյան

Գնահատող Կ. Բրուտյան

Գնումները համակարգող՝ Ա. Բաղրամյան